



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 10) 56 43 20

Ֆաքս (+ 374 10) 56 27 83

Էլ. փոստ info@moh.am

07.04.15 N 114/3730-15
Ձեր N _____

«ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՏԻԿԻՆ ԱՆՈՒՇ ԷՎՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Էվոյան

ՀՀ առողջապահության նախարարությունում քննարկվել է Ձեր 30.03.2015 թվականի գրությունը՝ Ախթալայի ԼՀԿ-ի պոչամբարների սանիտարական պահպանության գոտիների, առողջապահական ոփսկերի և դրանց վերաբերյալ իրականացվող ծրագրերի մասին, որի վերաբերյալ հայտնում եմ.

Գրությամբ ներկայացված հարցադրման 1-ին կետ.

Պոչամբարների սանիտարական պահպանության գոտիներ ՀՀ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերով չեն սահմանվում: Միաժամանակ «Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր» ՀՀՇՆ III-9.02.02-03 քաղաքաշինական նորմերով (4.11 կետ) սահմանվում են արդյունաբերական ձեռնարկությունների, այդ թվում՝

լեռնաարդյունահանման ձեռնարկությունների սանիտարական պաշտպանական գոտու չափսերը՝ որը կազմում է 500 մ.:

Հարցադրման 2-րդ և 3-րդ կետեր. «Պոչամբարների առողջապահական ուսկեր»-ը կապված են դրանց հնարավոր ազդեցությամբ շրջակա միջավայրի վրա և աղտոտվածության միգրացիայով մարդու օրգանիզմ: Նշված հարցը պահանջում է խորը և երկարաժամկետ համաճարակաբանական հետազոտություններ և շրջակա միջավայրի գործոնների դիտարկումներ, ինչը ՀՀ առողջապահության նախարարությունում արդեն իսկ մեկնարկվել է: Շրջակա միջավայրի աղտոտվածությամբ պայմանավորված ազդեցությունը մարդու առողջության վրա կարող է արտահայտվել ոչ վարակիչ հիվանդությունների (սրտանոթային, շնչառական հիվանդություններ, չարորակ նորագոյացություններ և այլն) զարգացմանը նպաստելու կամ սրացումների ձևերով: Բացի շրջակա միջավայրի աղտոտումից, առկա են նշված հիվանդությունների առաջացմանը նպաստող բազմաթիվ այլ գործոններ ևս, այդ թվում՝ ժառանգական գործոնը, հոգեհուզական, սնուցման վիճակը, ոչ առողջ ապրելակերպը, ծխախոտի, ալկոհոլի օգտագործումը, ճարպակալումը, բնակության միջավայրի օդի աղտոտումը և այլն: Վերոնշյալ համաճարակաբանական հետազոտությունները ընդգրկում են բազմուրոտ գործոնների նկատմամբ ուսումնասիրությունները և արդյունքների վերլուծությունը:

Միաժամանակ հայտնում են, որ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել է «Սրտամկանի սուր ինֆարկտի, շաքարային դիաբետի և կրծքագեղձի քաղցկեղի համաճարակաբանական հսկողության համակարգի մեթոդական ուղեցույցը», որի ներդրման նպատակն է՝ այդ հիվանդություններին առնչվող փաստացի տվյալների ապահովումը, որոնց հիման վրա որոշվում են հանրային առողջապահական գերակայությունները, մշակվում են ծրագրեր և իրականացվում են համապատասխան կանխարգելիչ, հակահամաճարակային միջոցառումներ՝ ներառյալ բժշկահիգիենիկ կրթությունը և առողջ ապրելակերպի քարոզչությունը: Միաժամանակ մեթոդական ուղեցույցի գործադրումը

հնարավորություն է ընձեռում նկարագրական համաճարակաբանական հսկողության ներդրման արդյունքում ստացված տվյալների հիման վրա կազմելու վարկած՝ հետազայում վերլուծական համաճարակաբանական հետազոտությունների իրականացնելու համար՝ ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների և հիվանդացության պատճառահետևանքային կապերը պարզելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ս. Զյուսով



Կատարող՝ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ
Աիդա Պետիկյան, Ռոմելլա Արովյան
Հեռ.010 340-444